

536

Ա Ա Ց ՈՒ Թ Ա Խ Ա Յ Ո

26 XII 1912,

Թիֆլիս.

ԵՐԵՎԱՆ ԴԱՐ ՈՒ ԿԵՍ ՅԵՏՈՅ

ԾԱՆԴԵԱՆ ՏՕՒԻ ՖԱԼԱԶԱՐԻԱ.



Թարգմ. Սալիմեան.

(Արտասալած «Հորիզոն» լրագրից):



պարտան Ա. Մալխասեանի, Արքունիկալով.

1912

84

Բ - 85

ՀՀ/Տ 42
No

Ա-64

84

85

118

ՀՀ/Տ 3

ՀՀ/Տ 4

Գ
Ա.

12 MAY 2006

19 NOV 2010

ԱՆՑՈՒ ԳՐԵՆԸ.

ՀՀ/Տ 3
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՖ ԴԱՐ ՈՒ ԿԷՍ ՅԵՏՈՅ


ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ՅԱՆՏԱԶԻԱՆ:

Թարգմ. Սալիկ Մելքոնյան

ՀԽՍՀ Պ. Եղիշե Արք. Ը ՅՈՒՆԻՏՈՒՄ
ՓԼԱՇՎԱԿԱՄԱՆ ՓՈԽ
(Արտաստղած Հարիբոն Ավագանյան) համար
Հ. Ի. Ա. Ավագանյան
Ա. Ա. Ավագանյան Անդրանիկ Ավագանյան

Տպարան Ա. Մալխասեանի, Ալէքսանդրապոլ.
1912

7699



օտաւորապէս զիշերւայ
ժամը մէկն էր: Պառկելուց
առաջ պատուհանը բացի
ու ծխաքարշս վառեցի:
Բուլօնեան անտառի մհձ
ծառուղիով անցնող աւ-
տոմօրինի խուլ զզըդոցը
խանդարեց զիշերային խաղաղու-
թիւնը: Ժառերը՝ շարժելով իրենց
մութ կատարները՝ թարմացնում էին օդը: Քա-
ղաքի փողոցների անշունչ քարերից չեր լուսում
ոչ միշատների խշխշոց, ոչ էլ մի ուրիշ կենդա-
նու ձայն: Երկների վրայ փայլվիում էին աստղե-
րը: Նրանց լոյսը թափանցիկ օդի մէջ աւելի
երփներանող էր երեսում՝ բայն միւս զիշերներին: Զատ
աստղեր սպիտակափայլ ցուրեր էին տա-
լիս: Բայց կային նաև գեղին ու նաբնջապոյն
ցուրեր՝ նման հինաւուրց կանթեղների բոցին: Գունատ աստղերը ամենից շատ էին, և նրանց
մէջ ես նկատեցի մէկը այնպէս նուրբ կապտա-
գոյն ու թափանցիկ, որ չէի կարողանում նրա-
նից աշխատ հեռացնել: Ափնոսացի, որ նրա ա-
նունը չպիտիմ, սակայն ինքս ինձ միսիթարեցի՝

1086
42

մտածելով, որ մարդիկ աստղերը անւանում են
ոչ իրենց իսկական անուններով:

Խորհրդածելով այն մասին, թէ իւրաքանչիւրը այդ պայծառ կէտերից աշխարհներ է լուսաւորում, ինքս ինձ հարցնում էի—արգեօք նրանք մեր արեգակի նման չեն լուսաւորում նաև անհամար տանջանքներ, և արգեօք տանջանքը չի թափաւորում նաև տիեզերքի անդունդներում: Մենք կիանքը ճանաշում ենք միայն այն արտայալտութիւններով, որ նա ունի երկրի վրայ: Եւ ենթաղըելով նոյնիսկ, որ մեր մոլորակը—ամենադժբախզներից մէկն է, մենք հիմք չենք ունենայ մտածելու, որ միւս մոլորակների վրայ գործերը աւելի աջող են ընթանում: Այդ ամենը ասում եմոչ այն պատճառով, որ իմ անձնական վիճակը աւելի վատ եմ համարում, քան ուրիշ մարդկանց վիճակը: Ես ոչ կին ունիմ, ոչ երեխաններ: Ոչ սիրահարւած եմ, ոչ էլ հիւանդ: Առանձնապէս հարուստ չեմ, քիչ եմ լինում մարդկանց մէջ... Կարճ՝ կարող եմ բաղաւորների շարքում համարւել: Սակայն բաղաւորներն էլ քիչ բերկրանք են ունենում: Ապա ուրեմն ինչ պիտի լինի միւսների վիճակը: Մարդիկ, ճշմարիտն ասած, արժանի են կարեկցութեան: Ես չեմ կշտամբում, բնութիւնը: Նրա հետ վիճել անկարելի է նա բանական չէ: Չեմ յարձակւիլ նաև հասարակութեան վրայ, որովհետեւ հիմք չեմ գտնում նրան հակազդելոնութեանը: Կենդանիներից բաղկացած հասա-

րակութիւնների կազմակերպութիւնը համապատասխանում է կենդանական բնութեանը: Երկիրըն այնպիսի մի մոլորակ է, որտեղ ասլրելու համար ուտում են, քաղցի մոլորակ է: Բնական է, ուրեմն, որ նրա վրայ բնակւող կենդանիները ագահ են ու անգութ: Նրանցից ամենախելացին, մարզը՝ բացի զրանից՝ նաև ժլատ է:

Նոյնը չի կատարւում արգեօք նաև միւս անհամար աշխարհներում, որոնք սաւառնում են եթերքի մէջ: Այն աստղերը, որ ես տեսնում եմ, արգեօք նրանք էլ մարդկային կեանք են լուսաւորում: Այստեղ էլ ուտում են, այդ անհունութեան մէջ էլ միմեանց ոչնչացնում են: Այդ հարցը խոռվայոյզ կերպով սեղմում է իմ սիրտը, և երկնքի վրայ փռւած այդ հրային ցօղի տեսքը ինձ վրա սարսափ է զցում: Սակայն փոքր առ փոքր իմ դաժան մտքերը մեզմանում են ու աւելի պայծառանում, և կեանքի մտապատկերը՝ իր մերթ այլող, մերթ քնքոյշ զգացողութեամբ՝ ինձ համար աւելի զրաւիչ է դառնում: Ես ասում եմ ինձ, որ մարդկային կեանքի սարսափներից վախենալու համար՝ պէտք է զգալ նրա գեղեցկութիւնները: Որովհետեւ՝ առանց կեանքի գեղեցկութեան՝ մենք ինչպէս կարող ենք հասկանալ բնութեան շարիքը, չը զիտակցելով և շրմբունելով նրա բարիքը:

Մի բանի բովէի ընթացքում իմ պատուանի սուած տարածում են Մօցարտի սօնատի հնչիւնները, երևակայութեանս մէջ պատկերաց-

Նելով մարմարեայ սիւների օդապատկերը՝
վարդերից հիւսած ոլորապտոյտ դրասանզներով։
Ինձ հարևան ապլում է ինչ որ տարօրինակ
գաշնակահար, որը զիշերները նւազում է Մօ-
ցարտից և Գլիւկից։ Պատուհանս փակում եմ և
քնելու համար պատրաստւելու ժամանակ՝ մտա-
ծում եմ հետեւալ օրւայ կասկածելի բաւակա-
նութիւնների մասին։ Եւ յանկարծ յիշում եմ
որ մօտ մի շաբաթ առաջ հրաւիրւած եմ նա-
խաճաշի, քաղաքից գուրս մի տեղ։ Միայն հաս-
տատ չեմ յիշում, վաղւան համար, թէ միւս օր-
ւայ։ Հաւաստիանալու համար՝ վերցնում եմ
հրաւիրատոմնը, որը ընկած էր սեղանիս վրայ,
և կարդում եմ. — «Սիրելի Դիւքը! Ծնորհ արա՝
նախաճաշելու ինձ հետ յաջորդ շաբաթ օրը,
սեպտեմբերի 23-ին։ Կըլինին X, Z. և ուրիշնե-
րը։ Ուրեմն, անկասկած, վաղն եմ հրաւիրւած։
Զանգահարում եմ, և պահասարը ներս է մրտ-
նում։ «Արթնացրու ինձ վաղը ժամը իննին»։
Վաղը, 1903 թւի սեպտեմբերի 23-ին, ուղիղ
լրանում է իմ երեսուն իններ տարին։ Արդին այս
աշխարհում իս տեսածի հիման վրայ՝ ևս կարող
եմ երեակայել այն, ինչ որ զեռ պիտի տեսնեմ։
Չատ էլ հետաքրքրական տեսարան չէ... Ես
վաղօրօր լում եմ այն խօսակցութիւնները,
որոնք տեղի կունենան վաղը, սեղանի շուրջը,
աւտօմօրիների, սիրեկանների, աջող կամ ան-
աջող թղթախաղի և մինիստրութեան դրո-
թեան մասին...»

Այն միջոցին, երբ ևս արդին քնում էի,
ժամանակ առ ժամանակ, հազիւ լսելի կերպով,
զեռ իմ ականջին էին հասնում Մօցարտի
ֆրազները, և իմ անուրջների մէջ պատկերանում
էին ծաղկափթիթ դալարով փաթաթւած մար-
մարեայ տաճարները...

Բոլորովին լոյս էր, երբ արթնացայ։ Սո-
վորականից աւելի շուտ հազնւեցի։ Ինքս էլ շր-
հասկանալով շտապելուս պատճառը. նոյնպէս
առանց ինձ հաշիւ տալու՝ յանկարծ ինձ զգացի
բակի մէջ։ Ոյն, ինչ որ տեսայ իմ շուրջը, անտ-
սելի զարմանք պատճառեց ինձ, որից կանգ
առան խորհելու ընդունակութիւններս։ Ընորհիւ
այդ վայրկենական անզգայութեան՝ իմ զար-
մանքը աւելի չսաստկացաւ, այլ մնաց նըրաքըն-
նին ու հանգիստ։ Հակառակ դէպքում նա կը-
լինէր անսահման և կը զառնար կարկամութիւն
ու սարսափ։ — այնքան իմ տեսածը տարբերուում
էր այն ամենից, ինչ որ պիտի լինէր։

Ինձ շրջապատող ամեն բան նոր էր ու ան-
յալու... Այն ծառերը, մարգագետինները, որ
ամեն օր տեսնում էի, անհետացել էին։ Այնտեղ,
ուր նախորդ օրը կանգնած էին Մեծ ալէյի
բարձր սպիտակ շինութիւնները, այժմ ձգւած
էր՝ պարտէզներով շրջապատւած՝ աղիւսէ
տնակների օտարոտի շարքը։ Սիրտս չը բռնեց,
որ յետ նայեմ-տեսնեմ, իմ տունը արդեօք գո-
րութիւն ունի, և չարունակեցի ճանապարհու
ուղղակի դէպի Դօֆինի կամարը։ Սակայն նրա

տեղը հիմա զատարկ էր: Այդտեղ Բուլօնեան անտառը գիւղ էր զարձել: Ճանապարհս ուղղեցի մի փողոցով, որը, ըստ երևոյթին, առաջւայ Սիւրէնիեան ճանապարհն էր: Նրա վրայի տները կառուցւած էին ինչ որ օտարոտի և նոր ճարտարապետական ոճով, չափազանց փոքր էին՝ հարուստ մարդկանց բնակարան լինելու համար, սակայն զարդարւած էին նկարներով, քանդակներով ու պայծառ գոյների յախճապակէ ագիւսներով: Տանիքի տեղ նրանք տերրասներ ունէին՝ առանձին ծածկոցներով: Ես գնում էի գիւղի տեսարան ունեցող՝ այդ ճանապարհով, որի պտոյտները գեղեցիկ հեռանկար էին բանում առաջս:

Այդ ճանապարհը կտրում-անցնում էր ուրիշ ճանապարհների բոլոր զարձւածքները և նրանց հանդիպելու տեղերը այնպէս էին շինուած, որ անկարելի լինի կառքերի ընդհարումը:

Տեսարանը շատ հաճելի էր մարդու աշքի համար: Գետնի վրայով ինչ որ ստւերներ էին անցնում: Ես գլուխս բարձրացրի և վիթխարի ձկներ ու ահապին թռչուններ տեսայ, որոնք խմբերով արագընթաց սլանում էին օդի միջով, որը թւում էր, թէ ովկիանոս է և երկինք միենոյն ժամանակ: Մէնի մօտ, որի հոսանքը փոխւած էր, պատահեցի մի խումբ մարդկանց, որոնք հագած էին կարճ վերնաշապիկներ, գոտիներ կապած և ինչ որ տարօրինակ ոտնամաններով: Հստ երևոյթին այդ մարդիկ բանուորի շոր

էին հագած: Սակայն նրանց քայլւածքը աւելի թեթև ու գեղեցիկ էր՝ քան մեր բանւորների քայլւածքը: Ես նկատեցի, որ նրանց մէջ կանալք կային: Առաջին անգամից դժւար էր նրանց զանազանել այն պատճառով, որ նրանք հագնւած էին նոյն ձեռք, ինչպէս և տղամարդիկի, և որ նրանց ոտները ուղիղ ու երկար էին, իսկ ազդրերը աւելի նեղ էին, քան նոյնիսկ ժամանակակից ամերիկոնիները:

Թէև այդ մարդիկ ամենեին դաժան տեսք չունէին, սակայն ես սարսափով էի նայում նրանց: Նրանք ինձ աւելի օտար էին թւում, քան այն բոլոր մարդիկ, որոնց մինչև այդ ժամանակ ես պատահել էի աշխարհում: Որպէս զի այլևս մարդկային երես չտեսնեմ, ես անցայ դէպի մի զատարկ փողոց և շուտով զուրս եկայ մի հրապարակ, որտեղ կայմեր էին ցցւած, իսկ կայմերի վրայ դրօշակներ էին փողփողում, որոնց վրայ ոսկէ տառերով գրւած էր—«Արեմտեան Դաշնակցութիւն»: Դրօշակներից ներքին, մեծ շրջանակների մէջ, որոնք զարդարւած էին խաղաղութեան խորհրդանշաններով, կախւած էին յայտարարութիւններ և ազգագրեր: Ժողովրդական հանդէսների և պարտադիր աշխատանքների մասին հաղորդող յայտարարութիւնների հետ միասին այստեղ կային նոյնպէս օդապարիկներ թռչելու ժամերի ցուցակները և մինուորտային հոսանքների քարտէզը, որի վրայ նշանակւած էր նոր զարաշրջանի 220

թւականի յունիսի 28-ի ցերեկը։ Այդ բոլոր յայտարարութիւնները տպագրւած էին նոր տառերով և այնպիսի մի լեզով, որի ոչ բոլոր խօսքերը ես կարողացայ հասկանալ։ Այն միջոցին, երբ ես աշխատում էի կարգալ յայտարարութիւնները, օդի մէջ անցուղարձող բազմաթիւ մեքենաների ստւերներն ու արտացոլումները փայլվում էին իմ առաջ։ Կրկին անզամ զլուխս բարձրացրի, և այդ անծանօթ երկնքի վրայ, որ աւելի մարդաշատ էր, քան երկիրը, այդ օդային բարձրութիւնում, որտեղ շարժւում էին զեկերը, և պտոյտ էին զալիս պտուտակները, զէտի ուր հորիզոնից շրջանաձև բարձրանում էր ծուխը, - ես տեսայ արեգակը։ Եւ յուզւեցի։ Դա միակ ծանօթ պատկերն էր՝ առաւօտից մինչև հիմա պատահածներիս մէջ։ Արեգակի զիրքին նայելով՝ եղբակացը, որ հիմա առաւօտեան ժամը տասը կը լինի։ Յանկարծ իմ յետից հասաւ ու առաջս ընկաւ տղամարդկանց ու կանանց մի նոր խոսմք։ Նրանց հազուստը և արտաքին տեսքը նոյնն էին, ինչ որ առաջին խորի մարդկանցը։ Իմ մէջ արմատացաւ այն տպաւորութիւնը, որ կանայք, թէն նրանց մէջ կային երիտասարդ ու ծեր, զէր ու վտիտ անձնաւորութիւններ, շատ յաճախ նման են այստեղ ինչ որ անսեռ էակների։ Ամբոխը անցաւ։ Հրապարակը նոչից զատարկեց, ինչպէս միը բաղաքների ծայրնը փողոցները, որոնք կենզանանում ու ապա զատարկեում են միայն արհես-

տանոցներից ու գործարաններից բանւորների դուրս զալու ժամանակ։

Ազգագրերի մօտ մենակ մնալով՝ ես նորից կարգացի թւականը. «28 յունիսի 220 թ.»։ Ի՞նչ է նշանակում սա։ «Երկրի տօնի» մասին ինչ որ մի յայտարարութիւն օգնեց ինձ հանելուկը լուծելու։ Ոյլ յայտարարութեան մէջ լիշտում է Երևանին եւրոպայում, մեր XX դարի վերջերում, պատահած զէպքերի մասին, որոնցից յիսուն տարի անցնելուց յետոյ՝ հիմնեում է զաշնակցութիւնը։ Նոր տոմարի 220-րդ թւականը այդպիսով համապատասխանում էր Քրիստոնէական դարագլիմի 2240 թւականին։ Մնում էր ինձ պարզել թէ ինչպէս ես յանկարծ ընկայ այդ 2240 թւականը։ Եթէ այս բոլորը լոկ երազնը լինէր, ես չէի զզալ ու զիտակցիլ այդ բոլորը, որովհետեւ քնի ժամանակ զիտակցութիւնը կորչում է... Ո՛չ, ես հաւատացած եմ, որ հիմա քնած չեմ։

Մտածմունքի մէջ ընկած՝ այդպէս զնում էի մի երկար փողոցով, որը եղբափակւած էր՝ միմեանց նման՝ փոքրիկ աղիւսէ տներով, որ թւում էր, թէ վերջ չունէին։ Այստեղ կամ այնտեղ հարթավայրի վրայ իմ առաջ ինչ որ պողպատէ շինութիւններ էին բարձրանում՝ կրկէսների նման, որոնց տանիքի վրայով ծուխ ու բոց էր բարձրանում։ Անսովոր հանգստութիւն էր տիրում այդ շինութիւնների շուրջը, որոնց նոյն իսկ ինչ լինելը շպիտէի, բայց արագ բանող

մեքենաների ձայներից ցնցւող օդը հիւանդագին
հարւածում էր իմ գլուխը: Վերջապէս ևս ինձ
զգացի՝ թեթե ու վայելուշ ճարտարապետական
ոճով մի ապարանքի առաջ: Այդ շինութեան
լայնածաւալ ճակատի վերևի մասում երևում էր
բանդակներով զարդարւած մի վահան, որի
վրայ բազմամարդ խնչոյք էր նկարւած: Պատու-
հաններով ևս տեսայ տղամարդկանց ու կանանց,
որոնք նստած էին մի մեծ ու լուսաւոր զահլի-
ճում, սարսաբեայ սեղանների շուրջը, որոնց
վրայ դրւած էին գեղանկար ամաններ: Ներս
մտայ կարծելով, թէ ըէստօրան է: ԹէԿ քաղ-
ցած չի, բայց յոզնել էի, և այդ զահլիճի զո-
փութիւնն ու այնտեղ կախւած պտուղների
զրասանզները շատ էին հրապուրիչ:

Դուն մօտ կանգնած մարդը ինձանից ու-
զեց իմ վճարապիրը (չէկ), և երբ ասացի, որ
չունեմ, նա նկատեց.

— Տեսնում եմ, որ, ընկեր, դու՝ այստեղա-
ցի չես: Բայց ինչպէս ևս ճանապարհորդում՝
առանց վճարապիրի: ԹէԿ ինձ համար շատ
ցաւալի է, բայց և այնպէս չեմ կարող քեզ ըն-
դունել: Գնա դիմիր աշխատանքի ընկերութեան
լիազօրին կամ, եթէ հաշմանդամ ես, դիմիր խնա-
մատարութեան բաժանմունքը:

Ես յայտնեցի, որ ամեննեին հաշմանդամ
չեմ և զահլիճից հեռացայ: Մի հաստ մարդ, որ
ինձ հետ միասին այնտեղից զուրս էր զալիս,
ասաց ինձ իրաւացի կերպով.

— Ընկեր, ոչ ոքի հարկ չկայ զիմելու: Ես
— հացի փուռի լիազօրն եմ: Մեր մի ընկերը
պակասում է: Գնանք միասին: Դու հէնց հիմա
կը սկսես աշխատել:

Ես շնորհակալութիւն յայտնեցի զիրուկ
անծանօթիս և ցանկութիւն յայտնեցի օգտա-
ւէտ լինելու, միան աւելացրի, որ ևս արհես-
տով հացթուի չեմ:

Նա զարմացած նայեց դէպի ինձ ու ասաց,
որ, ինչպէս նկատում է, ես սիրում եմ կատակել:

Մենք կանգ առանք՝ հոյակապ գոներով մի
ահագին չուզունէ շինութեան առաջ, որի ճա-
կատի կողմը կանգնած էին երկու արոյրէ հսկա-
ներ! Սերմնացան և հնձող: Նրանց մարմինները
արտայատում էին՝ ինքն իր վրայ վստահ և
երբէք լարսելու կարիք չունեցող՝ ոյժ: Նրանց
զէմքի վրա փայլում էր հպարտ անդորրութիւն,
և նրանք կանգնած էին՝ զլուխները բարձրա-
ցըրած:

Մենք ներս մտանք մի զահլիճ, մօտ բա-
ռասուն մետք բարձրութեամբ, որտեղ՝ սպիտակ
նուրբ փոշիով ծածկւած մեքենաները բանում
էին երկարաձիգ ու թեթե ազմուկով: Մետա-
ղեայ առաստաղի բարձրութեան վրայ մէկ-մէկու
յետեից երկում էին քսակները և ինքն իրենց
զլորում զանակի մօտ, որ և քանդում էր նրանց
կարերը: Ապա ալիւրը ինքն իրեն թափւում էր
տաշտերի մէջ, և պողպատէ լայն ձեռքերն ըս-
կում էին հունցել նրան. խմորը հոսում, թափ-

ւում էր կաղապարների մէջ, որոնք, հէնց որ լցւում էին, իսկոյն ըէլսերի վրայով վազում էին դէպի լայնարձակ և խոր վառարանները, որոնք նման էին ներքնուղու։ Ծնդամենը մի հինգ կամ վեց մարդ՝ անշարժ կանգնած այդ շարժման մէջ, դիտում էին անշունչ մեքենաների բանելու ընթացքը։

— Սա հին հացարանն է, ասաց ինձ իմ ուղեկիցը։ — Նա մի օրումը ութսուն հազար հացից աւելի չի թխում, և նրա շափականց թոյլ մեքենաները շափից զուրս ժողովուրդ են զրագեցնում։ Մակայն զա ոչ մի նշանակութիւն չունի։ Հիմա բարձրացիր մթերքը զալու տեղը։ Ես ժամանակ չունէի աւելի ստոյդ ցուցումներ խնդրելու։ Մեքենան ինձ բարձրացրեց վերի պլատֆորմը։ Հէնց որ ոտք դրի նրա վրայ. իսկոյն ինձ մօտ իջաւ թռչող կէտի նման մի ինչ որ բան և սկսեց իրենից վայր թափել ալիւրով լի քաղաքները։ Մեքենայական միջոցներով չէր բարձրացրած այստեղ այդ մեքենան։ Ես ուշագրութեամբ նայեցի ու հաւաստիացայ այդ բանում։ Միւս թռչող կէտերը զալիս էին նոր քաղաքներով, որոնք վայր ձգւելով իրենք իրենց ուղղում էին դէպի այն դանակը, որ կարտում էր կարերը։ Կէտերի անխները պտոյտ էին դալիս, զեկը զործում էր։ Ոչ ոք չը կար ոչ զեկի մօտ, ոչ էլ միխանիզմի մօտ։ Հեռացից ինձ համում էր մի ձայն, որ նման էր պիծակի թռչելուց առաջացած տպոցին։ Կէտը մեծանում էր զար-

մանալի արագութեամբ։ Նրա տեսքը վստահ ու թիւն էր արտայայտում, բայց երբ մտածում էի, թէ մեքենան կարող է սխալել, զողս բռնում էր։ Մի բանի անզամ իմ մէջ ցանկութիւն ծընւեց ինպրելու, որ ինձ ցած իջեցնեն, բայց ամօթից յուսում էի։ Ես մնացի իս տեղը։ Արեգակը թէրւում էր դէպի արևմուտք և արդէն մօտ ժամը հինգն էր, երբ ինձ մօտ ուղարկեցին վայր իջնելու մեքենան։ Բանւորական օրը վերջացած էր։ Ես վճարագիր ստացայ կերակրի և բնակաբանի համար։

Գիրուկ ընկերս զիմեց ինձ։

— Դու պէտք է, որ բաղցած լինես։ Եթէ ուզում ես ընթրել հասարակական սեղանատանը, կարող ես։ Եթէ առաւելութիւն ես տալիս քո սեհեակում ընթրելու, — զարձեալ կարող ես։ Եթէ կը համաձայնւիս կերակրել ինձ մօտ, մի բանի ուրիշ ընկերների հետ, զրա մասին հէնց հիմա ասա։ Ես կը հեռախօսեմ կերակրի արհետանոցը, որ քո բաժինն էլ ուղարկեն։ Այդ բուըը բացատրում եմ, որպէս զի դու կարգադրես այնպէս, ինչպէս քեզ համար աւելի յարմար է։ Երեի դու հեռու տեղից ես։ Մի տեսակ ճնշւածանը ունես։ Այսօր քեզ հեշտ գործ ընկաւ։ Զրկարձես, թէ ամեն օր կեանքը այգպէս աժան է նստում։ Եթէ Հ—ճառագայթները, որոնք կառավարում են օղապարիները, վատ գործէին, ինչպէս երբեմն լինում է, պէտք կը լինէր աւելի երկար աշխատելու։ Ի՞նչ արհեստի ես և որտեղուց ես ինքը։

Այդ հարցերը շատ նեղ զրութեան մէջ զրին ինձ: Ես չկարողացայ նրան ճշմարտութիւնն առել: Զրկարողացայ նրան յայտնել, որ ես բուրժուա իմ, XX դարու զաւակ: Նա ինձ խելազարի տեղ կը գնէր: Ես պատասխանեցի անորոշ և ընդհանուր խօսքերով, որ ես որոշ արհեստ չունեմ, և որ հեռու, շատ հեռու տեղից եմ եկել:

Նա կրկնեց իր հետ ընթրելու հրաւերը և հարցրեց անունս: Ես պատասխանեցի, որ անունս հպազիտ Դիլֆրէն է: Նա զարմացաւ, ըստ երեսյթին, այն պատճառով, որ ես երկու անուն ունեմ:

— Իմ անունս,— ասաց նա, — պարզապէս Միշէլ է:

Յետոյ ուշադրութեամբ զննելով ծղոտէ դիմարկս, բամկոնս, կօշիկներս և իմ ամբողջ հազուստը, որը, ճշմարիտ է, մի քիչ փոշոտւած էր, բայց ձեզ զեղեցիկ էր, որովհետև հասարակ դերձակի կար չէր, — նա ինձ ասաց.

— Ես գուշակում եմ, թէ զու որտեղից ես եկել. Դու ապրել ես Աֆրիկայի սևամորթների մէջ: Միայն զուլուսներն ու բազուտոսներն են հիմա այդպիսի այլանդակ ձեւ տալիս հազուստին, այդպիսի անպիտան կօշիկներ կարում և օսլայում ճերմակեղէնը, որ կոշտ լինի: Միայն նրանց մօտ զու կարող էիր սովորել միրուքդ ածիել և երեսիդ վրայ թողնել միայն բեխերդ ու փոքրիկ բակենբարդներ: Երեսի մասերը ածիելու և խուզելու այդ սովորութիւնը, որ զործ էր

ածւում՝ իբրև թէ նրանց այս կամ այն գեղեցիկ ձել տալու նպատակով — մարմինը զանելու սովորութեան վերջին մացողդղն է: Միայն զուլուսներն ու բազուտոսները դեռ այդ սովորութիւնը ունին: Այդ սևամորթները դեռ խարխափում են տղիտութեան մէջ, ինչպէս Քրանսիան էր երեք-չորս դար առաջ, առաջարկութեան մէջ:

Ես ընդունեցի Միշէլի հրաւերը, որ իր մօտ ընթրեմ:

— Ես այստեղից հեռու չեմ ապրում, — ասաց նա, և մօտ 510 կիլոմէտրի վրայու իմ օղապարիկը կանոնաւոր է թռչում, շուտով ոնց մեկ կրհացնէ:

Նա հրաւիրեց ինձ նստելու մի մեծ մերենայական թւշունի որովայնը մօտ, և սեսք իսկոյն սլացմանը օդի մէջ այնպիսի արագութեամբ, որ շունչ կտրեւց:... Դաշնութիւն և մարզակետիների տեսարանը այն չէր, ինչ որ ես առաջ գիտէի: Բոլոր ճանապարհների վրայ տներ էին շարտած, և ուղղման համար անցկացրած բաղմաթիւ չըանցքները մէկը միւսին կտրում էր տրծաթափալ շերտերով: Իմ արտայալտած հիացմունքին Միշէլը պատասխանեց:

— Հողը վատ չէ շահմագործուեմ, և մշակումը խնկապէտ զարձել է ինտենսիւ այս ժամանակից սկսած, երբ քիմիկասները հողակործներ դարձան: Այդ բանի համար շատ ջանք ու պշնատանք են փորձադրել վերջին երեք հարիւր տարւայ ընթացքում: Նպատակն էր հարկադրել, որ

հողը շորս-հինգ անգամ աւելի արտադրէ, քանի առաջ էր արտադրում։ Այս առատութիւնը, որ գու տեսնում ես մեղանում, զիտութեան միջոցով է ձեռք բերւած։ Քաղաքներին ու քաղաքում ապրելուն համարեա բոլորովին վերջ է տրւած, և այդ բանը նոյնպէս չափազանց օդաւէտ էր հողագործութեան համար։

— Ի՞նչպէս, — բացականչեցի, — քաղաքները դատարկել էր, հապա Պարիզը ինչ եղաւ։

— Այլա ոչ ոք չի ապրում այնտեղ, — պատասխանեց Միշէլը, նրա այլանդակ ու վատառողջ հինգյարկանի տների մեծ մասը, որոնց մէջ պատսպարտում էին անցեալ դարաշրջանի քաղաքացիները, աւերակներ են դարձել։ Եյն շարաբաղդ դարաշրջանի XX դարում լաւ չէին կառուցանում։ Հին ու լաւագոյն շինութիւնները մենք պահպանել ենք ու թանգարաններ դարձել։ Մենք շատ թանգարաններ ու գրադարաններ ունենք, որոնցում և ոռվորում ենք։ Որովհետև դատարանները, առետուրը և զօրքը անհետացել են, այդ պատճառով, իսկապէս ասած, քաղաք չի մնացել մեղանում։ Բայց և այնպէս՝ մի բանի կէտերում ազգաքնակութիւնը աւելի խիտ է՝ քան միւս տեղերում, և չնայած արագ հաղորդակցութեան՝ մետաղազործական կենդրոնները և հանքային շրջանները չափանց բազմամարդ են։

Միշէլը դեռ էլ շատ զարմանալի բաներ պատմեց նոր հասարակութեան կազմակերպու-

թեան մասին, միաժամանակ կառավարելով իբ օդապարիկը, որի թռիչքը ապա կանգնեցընց մի համեստ, բայց սիրուն տնակի տերրասի մօտ։

— Արդէն տեղ հասանք, — ասաց նա, — Ես այստեղ եմ ապրում։ Դու կընթրես մեր ընկերների հետ, որոնք ինձ նման վիճակագրութեամբ են պարապում։

— Միթէ զուք վիճակագիր էք։ Ես կարծում էի, թէ հացթուխ էք։

— Ես հացթուխ եմ հինգ ժամւայ ընթացքում։ Մնացած ժամանակը վիճակագրութեամբ եմ պարապում։

Պատմութեանը փոխարինել է այդ գիտութիւնը։ Առաջւայ պատմագիրները պատմում էին միայն փոքրաթիւ մարդկանց փայտոն սիրագործութիւնների մասին։ Մերոնք արտադրութեան և սպառման գումարներն են որշում։

Առաջարկելով ինձ այցելել կտուրի վրայ տեղաւորւած ջրաբուժարանը, Միշէլը ապա տարաւ ինձ ներքեւ, սեղանատունը, որը լուսաւորած էր, էլէքտրականութեամբ։ Դա բոլորովին սպիտակ սենեակ էր՝ զարդարւած միայն առաստաղի ծեփւած կարմիզով, որը պատկերացնում էր ծաղկած ելակ։ Ճենապակեայ գունաւոր սեղանի վրայ շարւած էին ամաններ, որոնց ջնարակը (գլազուր) մետաղի փայլ ունէր։ Մեղանին նստած էին երեք անձնաւորութիւն, որոնց Միշէլը անւանեց — Մօրէն, Պէրսէվալ,

Եկրօն, Երեքնու էլ հակած էիմ, միատեսակ կաքն
բաճկոնտկներ, մթաւշեայ անդրավարտիքներ, և
մեղուամներ: Զերօնի և Պէրսէվալի երեսները
մաքուր էին: Կարճ մագերն ու պարզ հայեցը-
ները տղայի տեսք էին տալիս նրանց: Մական
իս չէր կասկածում, որ դրանք կանայք են:
Պէրսէվալը բաւական զեղեցիկ էր թւում ինձ,
թէև շատ երիտասարդ չէր: Իսկ Շէրօնը կատա-
րելապէս շնազ էր: Միշէլը ներկայացրեց ինձ.
Ես ձեզ մօտ ընդի ընկեր իապօլիտին,
որը անտանեւում է նաև Թիւֆրէն: Առը մինչև
հիմա ասլըելիս է եղել սեամորթների մէջ: Նա
չկարողացաւ ատանընէկ ժամին ճառշել: Այդ
պատճառով նա հիմա երեխ շատ քաղցած կլինի:
Ես յիբաւի քաղցած էի: Ինձ տւիմ ինչ որ
դանի փոքրիկ, քառակուսի կտորներ, որը վասո-
րան չէր, բայց համը չկարողացայ հասկանալ:
Սեղանի վրայ դրւած էին ամեն տեսակ պա-
նիքներ: Մօրէնը ինձ համար թոյլ զարեցուը
լցըեց ու ասաց, որ Վակարող եմ համարձակ
խմել, որքան ուզում եմ, որովհետեւ նա մի կա-
թիլ արկօհօլ անդամ չի պարունակում իր մէջ:
— Դա լաւ է: Հաճելի է լսել, որ դուք զի-
նակցում էր ալիօնիլ վնասն ու վտանգը:
— Նա այլիս գոյսթիւն չտնի, պատաս-
թանեց Մօրէնը: — Ելիօնօլականութեամը աջողւեց
յաղթել զեռ անցեալ դարաշրջանի վերջում:
Այսնց զբան անկարենի կը լինէր նոր կարգեր
տաեղծիլ:

— Դուք չէք լաւացրել նաև ընդհանրասէս
մունդը, — հարցըրի են: ճաշակելով տարօրինակ
ձեռվ կտրւած մի ինչ որ բանի կտոր:
— Ընկեր, — պատասխանեց Պէրսէվալը, —
զու, երեխ, քիմիական մնունդի մասին ես հարց-
նում: Նրա նւաճումները դեռ շատ մեծ չեն:
Մենք իզուր մեր քիմիկոսներին ուղարկում ենք
խոհանոցները: Նրանց զեղհատերը (պիւլիլները)
ոչ մի բանի պէտք չեն: Թէև մենք աւելի խելա-
ցի կերպով ենք միացնում զանազան սննդարար
տարրերը, քան առաջ, սակայն ուտում ենք հա-
մարեա նոյնապէս էռպիտ, զժւարամարս բաներ,
ինչպէս և անցած զարաշրջանի մարդիկ, և ստա-
նում ենք համարեա նոյնապիսի բաւականութիւն:
— Մեր զիտնականները փորձում են աւելի
խելացի սննդառութիւն մտցնելու:

— Դրանք տղայական բաներ են, — ասաց
մատագահաս Շէրօնը: — Ոչինչ չի դուրս գայ,
քանի զեռ ոչնչացած չէ կոյք աղիքը, մի աւե-
լորդ և վնասակար գործարան, որ մեկրօրային
վարակման բոյն է... Դրան կը համենի:

— Ի՞նչ ձեռվ:

— Սկզբից անդամահատական միջոցներով
բաւականաշափ մարդկանց այդ գործարանը հե-
ռացնելով, ապա այդ օրգանի բացակայութիւնը
կը զառնայ ժառանդական և ամբողջ մարդկային
ցեղին յատուկ...

Այդ մարդիկ ինձ հետ քաղցրութեամբ էին
վարւում, բայց ես չէի կարողանում ընտելանալ

ոչ նրանց խօսակցութիւններին, ոչ էլ բարբերին ու նկատեցի, որ ինքս էլ ամեններն չեմ շարժում նրանց հետաքրքրութիւնը, և որ իմ մտածելու եղանակը լիակատար անտարերութիւն էր ներշնչում նրանց։ Որքան էլ սիրալիք կերպով էի գիտում նրանց, ինձ թւում էր, թէ նոյն րան տեղի էի հեռու մղում ինձանից։ Երբ Շէքոնին մի քանի՛ շատ համեստ և բոլորովին անկեղծ՝ հաճոյական խօսք ասացի, նա դադարեց զէպի ինձ նայելուց։

Հետաքրքրութիւնս, սակայն, շափազանց դրզւած էր, և ես սկսեցի թախանձագին խընդրել Մօրէնից, որ գոնէ ընդհանուր գծերով պատմէ ինձ այն զէպքերի ընթացքը. որոնք առաջացրել են մեր շուրջը տեսնող ամեն բան և որոնք ստեղծել են կեանքի ներկայ կազմը։

Սկզբից Մօրէնը հրաժարւեց, ապա սկսեց մի երկար պատմութիւն, որի մէջ հնարաւորն ու հաւատալին խառն էր ամենահամարձակ ֆանտասմագրիայի հետ։

Ապա նա ուրաքանչեց հասարակութեան կազմակերպութեան սկզբունքները, որոնք ստեղծել են երկք դար յետոյ։

Զարմանալի էր, թէ որքան թիշ ստեղծագործութիւն էր մտել կեանքի մէջ այդ երկարժամանակամիջոցում, և ինչպէս Մօրէնի նկարագրած կարգերը նման էին նրանց, որ նկարում էին մեր ժամանակակիցները, հեռաւոր XX դրի ուտօպիստները։ Այստեղ կար, ի միջի այլոց,

նաև մտաւոր և ձեռքի աշխատանքի դասաւորութիւնը համայնքների անդամների մէջ՝ նայած նրանց ընդունակութիւններին և հակումներին, արտադրութեան և պատերազմի վերջացնելը, որոնք անկարելի էին դարձել՝ շնորհիւ նոր գիտական գիտերի։ Սահմանները պաշտպանում էին էլեքտրականութեամբ, որ տէրութեան շուրջը շանթային գոտի էր կազմում, և X—ճառագայթներով, որոնց գործողութիւնը կարող է ամբողջ բանակներ ոչնչացնել…

— Մեր կենդըռնական կայարանում ստեղնաւոր գործիքի մօտ նստած է մի ակնոցաւոր մարդ, — ասաց Մօրէնը։ — Դա մեր միակ զինուորն է։ Բաւական է, որ նա սեղմէ մի ստեղն, որ ոչնչանայ հինգ հազար հոգուց բաղկացած մի գորարանակ։

Աշխատանքի մի որոշ գումար իրաւունք էր տալիս օգտելու այս կամ այն կենսական կարևորութիւն ունեցող բանից, և այդ փոխանակութիւնը կատարւում է վճարագրերի միջոցով։ Նոր կեանքի միւս բոլոր մանրամասնութիւնները նոյն տեսակ էին…

Ամենից շատ իմ ուշագրութիւնը գրաւում էր սեռերի յարաբերութիւնը նոր հասարակութեան մէջ։

— Եստ երևոյթին, — հարցը ես, — դուք ընտանիքներով չէք ապրում։

Ալդ հարցի ժամանակ արտայայտուած իմ
զարմանքը ծիծաղելի թւաց ընկերունի Շէքօնին:
 — Մեզ յայտնի է, որ, յիրաւի, ամուսնու-
թիւնը գոյութիւն ունի մի քանի ազգերի մէջ,
— ասաց նա: — Բայց մենք ոչ մի խոստմունք
չենք տալիս և չենք երդում: Մենք կարծում
ենք, որ մարդկային էակի ճակատագիրը չի կա-
րող և չպիտի կախւած լինի մի խօսքից: Սակայն
անցեալ դարաշրջանի սովորութիւններից մի
կտոր մնացել է: Երբ կինը դաշն է կապում
տղամարդի հետ, իր հաւատարմութեան համար
երդում է լուսնի եղջեւը: Իսկապէս ոչ տղա-
մարդը, ոչ կինը ոչ մի պարտականութիւն յանձն
չեն առնում: Քիչ չի պատահում, սակայն, որ
նրանց դաշնակցութիւնը տեսնմ է ամբողջ
կեանքի ընթացքում: Առաջւայ ժամանակներում
տղամարդը աշխատում էր հաւատացնել կնոջը,
որ սա իրեն էր պատկանում: Մենք այնպէս
պարզամիտ չենք, ինչպէս մեր նախնիքներն են
եղել: Կարծում ենք, որ մարդկային էակը ինքն
իրեն է միայն պատկանում, ոչ թէ ուրիշի:
Ինչ էլ ասելու լինին, Իպաօլիտ, պէտք է հա-
սարակութիւնը ենթարկել ընութեանը և ոչ թէ
ընութիւնը՝ հասարակութեանը, ինչպէս այդ
գործադրում էր չափազանց երկար ժամանակ:
— Հապա երեխաները, — երկուութեամբ
հարցը:

— Երեխաները՝ ինչ:

— Անտէր չեն մնում, նրանք՝ ընտանիք
չլինելու պատճառով:

— Ի՞նչից է առաջանում քո մէջ այրգիսի
մի միտք: Մայրական սէրը մի այնպիսի բնագդ
է, որ չափազանց յատուկ է կնոջը: Անցած ժա-
մանակների սարսափելի հասարակութեան մէջ
եղել են այնպիսի մայրեր, որոնք տանում էին
ամօթ ու անարգանք և մուրալով կրթում,
դաստիարակում էին: ամուսնութիւնից դուրս
ծնած՝ իրենց զաւակներին: Ինչի պիտի, ուրեմն,
մեր ժամանակի կանայք, որոնք ոչ մուրացկա-
նութիւն գիտեն, ոչ անարգանք, իրենց երեխա-
ներին թողնեն ճակատագրի կամքին: Մեր մէջ
կան բազմաթիւ բարի ամուսիններ և մայրեր:
Սակայն կանանց թիւը շատ մեծ է, և ամենքին
չի վիճակւած ամուսին ու մայր լինել: Այն ժա-
մանակից, երբ կանայք սկսեցին գործել ու
մտածել նոյն ձեռք, ինչպէս տղամարդիկ, ահա
այդ ժամանակից երեացին բազմաթիւ կանայք,
որոնք իրենց տեսքով բոլորովին նման են երի-
տասարդներին: Ճատ կարելի է, կզայ մի օր,
երբ կը յայտնին այնպիսի մարդկային էակներ,
որոնք չեն պատկանիլ մէկ կամ միւս սեռին,
ինչպէս կան մեղուների մէջ: Դա մեծ աջողու-
թիւն կը լինի: Աշխատաւոր ձեռների թիւը
կաւելանայ, իսկ ծննդաբերութիւնը չի գերա-
զանցիլ սպառողական միջոցներից: Մենք ներ-
կայումս հաւասարաշափ վախենում ենք թէ
ծննդաբերութեան պակասութիւնից և թէ գե-
րակշութիւնից:

Բաժանւելու ժամը հասաւ: Միշէլն ասաց,

որ ինձ բնակարան է յատկացըած ոչ հեռու իր
տնակից և որ ջէրօնը, տուն վերադառնալու
ժամանակ, ինձ կուղեկցէ մինչև այնտեղ:

Գիշերը փայլում էր պայծառ ու մեղմ ծիա-
ծանային լոյսով, որ արտացոլում էր ծառերի
տերեների վրայ:

Ես ու Շէրօնը գնում էինք միմեսնց կից:
Ես զիտում էի նրան: Կոշիկների տափակ ներ-
րանները նրա քայլածքին կայունութիւն էին
տալիս, իսկ մարմին՝ հաստատութիւն: Թէ է
տղամարդու հազուստը նրան աւելի փորք էր
երևացնում քան իսկապէս կար, թէ նա ձեռքը
զրպանում էր պահում, բայց և այնպէս նրա
սիզաննմ քայլածքը զուրկ չէր հպարտութիւնից:
Նա համարձակ նայւածքը դարձնում էր աջ ու
ձախ: Իմ պատահած կանանցից զա առաջինն էր,
որը արտայացտում էր հանդիստ հետաքրքրու-
թիւն և անհոգութիւն: Նրա զիմարձերը՝ ստւե-
րագծւած բէրէտ փոքրիկ գլխարկով՝ նուրբ ու
արտայայտիչ էին: Ես վախենում էի, թէ նա
ինձ յիմար ու ծաղրալի մէկը կը համարէ: Սն-
կասկած էր, որ նա զէպի ինձ վերաբերում էր
խորին անտարբերութեամբ: Սակայն նա անսպա-
սելի կերպով հարցրեց, թէ ինչով եմ ես պա-
րապում:

— Ես էլէքտրօտեխնիկ եմ,—պատասխանեցի
աջողակի:

— Ես նոյնպէս,—պատասխանեց նա:

Մեր խօսակցութիւնը ժամանակաւորապէս
ընդհատւեց:

Ինչ որ չը լսւած ձայներ գիշերային օղը
լցրին իրենց մեղմ ու համաշափ աղմուկով, որին
սարսուռով ականջ էի դնում, կարծես նոր աշ-
խարհի հրէշաւոր հանճարի շունչը լինէր դա:

Որքան շատ էի նայում, էլէքտրօտեխնի-
կուհին աւելի էր զուր գալիս ինձ: Նրա ան-
տարբերութիւնը զէպի ինձ, էլ աւելի խիստ էր
վառում իմ այդ զգացմունքը:

— Այդպէս, ուրեմն, — ասացի, — զուք սէրն
էլ զըէլ էր զիտական հիմունքների վրայ: Եւ նա
չի յուզում ու չի տանջում այլ ևս ոչ ոքի:

— Դու սխալում ես, — պաասխանեց նա:
— Ի հարկէ, մենք հեռու ենք անցեալ զարա-
շրջանի՝ կատաղի յիմարութիւններից և մարդ-
կային բնախօսութիւնը ազատել ենք նախապա-
շարումներից: Մենք մի կողմն ենք ձգել՝ սուտ
ու անողորմ հայեացը ինչ որ «պարտքի» վե-
րաբերմամբ: Սակայն՝ էակներին զէպի միմեանց
զրաւող օրէնքները մեզ համար էլ մնում են
խորհրդաւորք: Երտազրման հանճարը էլի նոյնն
է, ինչ որ եղել է և կը լինի մարդկային ցեղի
մէջ: Նա անխոցելի է և ինքնակամ: Հիմա, ինչ-
պէս և առաջ, բնազրումը ուժեղ է բանականու-
թիւնից: Այս զործում էլ մեր գերազանցու-
թիւնը նախնիքներից այն է, որ մենք ոչ միայն
զիտենք այդ, այլև խօստովանում ենք այդ բանը:
Մեր մէջ կայ այն ոյժը, որը ընդունակ է աշ-
խարհներ ստեղծելու, — զա ցանկութիւնն է. և
դու ուզում ես, որ մենք կառավարենք նրան

ու հաւասարակշռենք: Դա չափազանց մեծ պահանջ է: Մենք, ի հարկէ, այլևս բարբարուներ չենք: Սակայն դեռ իմաստուններ էլ չենք: Մեռերի յարաբերութիւնները մեզ համար դեռ մուռ են համելուկ: Այդ յարաբերութիւնները մեղանում այնպէս են, ինչպէս կարող են լինել ամենից յաճախ տանելի են, հազւագիւտ դէպրերում հմայիչ են, երբեմն՝ սարսափելի: Բայց չկարծես, ընկեր, որ սէրը այլիս ոչ ոքի չի յուզում:

Այդպիսի տարօրինակ մտքերի դէմ ես ոչինչ չկարողացայ պատասխանել: Խօսակցութիւնը փոխեցի կանանց բնաւորութիւնների մասին, վստահանալով, ի միջի այլոց, ասելու Շէրօնին, որ զոյութիւն ունեն երեք կարգի կանայք — սիրոյ համար ստեղծւածներ, հետաքրքիրներ և անտարբերներ, — ես հարցը նրան, թէ որ կարգին է, իր կարծիքով պատկանում է ինքը:

Նա հպարտութեամբ նայելով դէպի ինձ ասաց.

— Նոյնպէս կան մի քանի կարգի տղամարդ դիկ: Գոյութիւն ունեն նախ՝ յանդուդներ...

Այդ խօսքերը ցոյց տվին, որ նա մեզ ամելի ժամանակից կին է քան թւում էր ինձ մինչև հիմա: Ես սկսեցի նրա հետ խօսել այն լիզով, որով սովորաբար խօսում եմ այդպիսի դէպերում: Եւ մի քանի գլարճալի ու աննշան խօսքերից յետոյ՝ ասացի նրան.

— Ծնորհ արէք, ատացէք ինձ ձեր անունը այն, որով կոչում են ձեզ ձեր ընկերներն ու բարեկամները:

Այդպիսի անունն եմ չունեմ: Այս անականացեցի յոր զարդար ինձ համար անհանելի էր ու շարունակեց՝ կարծես մի փոքր վիրաւուրած:

— Թու կարծում ես, թէ կինը նոյն իսկ չի կարող զուր զարդէ նաև առանձին անուն չունէ, ինչպէս նախկին ժամանակների կանոյք:

— Ո՞չ, ես այդպէս չեմ մտածում, և զուք դրա ամենալաւ ապացոյցն էք:

Ես ուզեցի նրա հայեացքը ըմբռնել, բայց չաջողւեց: Նա կարծես չհասկացաւ այն, ինչ որ ասացի: Այլս կասկած չկար. Նա կօկտունի էր: Ես յափշտակւած էի, ես նրան ասացի, որ ինքը հմայիչ է, որ ես սիրահարւած եմ նրա վրայ: Նա չէր ընդհատում իմ զեղումները և վերջը միայն հարցրեց.

— Ի՞նչ է նշանակում այդ բոլորը:

Ես աւելի ձեռներէց ու յամառ զարձայ:

— Դա վայրենու ձեռը ու վարմունք են:

— Ես ձեզ զուր չեմ զալիս:

— Ես այդ չասացի:

Մենք նստեցինք թեղոշ ժամուի ստվերում, նստարանի վրայ:

Ես բռնեցի նրա ձեռքը և տապահուց դեպի լու շրթունքները...

Ցանկարծ ամեն բան անհանցու, և այլևս

Խ. ԱԿԵՐԿԱՆՅԱ

№ 20 դ ո ց

Եի տեսնում և զգում այն, ինչով համակւած էլ
մի բոսկ առաջ, և արթնացայ մահճակալիո
վրայ:

Ես արորեցի աշքերս, որոնք ծակծկոտ-
ւում էին օրւայ լոյսից, ապա նայեցի—տեսայ
սպասաւորիս, որ դժմս կանգնած էր անհեծեթ
զմբով ու կրկնում էր միևնոյնը:

—Արդէն ժամը ինն է։ Դուք հրամայել էիք,
որ ժամը իննին ձեզ արթնացնեմ։ Վեր կացէք։
Արդէն ուղիղ ժամը ինն է...



ՀԱՅՈՒ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԿԵԱԼ ԳՐՔՈՅՑԿՆԵՐԸ.

1. Վ. Պ. ԱԽԵՆԱՐԺՈՒՄ. «Ինչ է ասում սենեակը», թարգմ. Տ. Տ., հրատ. Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկ. Գինն. է 10 կոպ.
2. ԻՇԻԱՆ Ա. ՍՈՒՄԲԱՋՈՎ. «Գաւաճանութիւն», դրամատիկական լեզենդա, 5 գործ. թարգմ. Զալալ Տ.-Գրիգորեանի, հրատ. «Աղբիւր-Տարագի. Գ. 50 կոպ.
3. ԼԵՒ ՏՈՂՄԱՅՅՈՅ. «Աստւած ճշմարտութիւնը տեսնում է», բայց շուտ չի յայտնում», թարգմ. Զալալ Տէր Գրիգորեանի, հրատ. «Աղբիւր-Տարագի» Գ. 3 կոպ.
4. Զ. Տ.-ԳՐԻԳՈՐԵԱՆ. «ԼԿ Տօլսոյ», «կենսագրական ակնարկ» հրատ. «Աղբիւր-Տարագի». Գ. 15 կոպ.
5. ՄՏ. ՊԵՏԲԼՇԵԿԻՍԿԻ. «Չիւն», դրամա 4 արար. թարգմ. Զալալ Տէր-Գրիգորեանի, հրատ. «Աղբիւր-Տարագի». Գ. 40 կոպ.
6. ԷՐՆԵՏ. ՍԵՏՈՆ-ՏՈՄՊՈՆ. «Կաղիկ քոթոթը», թարգմ. Սալլիւմեանի, հրատ. «Հասկերից», Գ. 20 կոպ.
7. ԶԱԼԱԼ. Տէր-ԳՐԻԳՈՐԵԱՆ. «Հէնրիխ Պետալոցցի», կենսագրական ակնարկ, հրատարակ. «Պետալոցցի» Գրատան Գ. 39 կոպ.
8. ԱՆԱՏՈԼ. ՅՐԱՆՅ. «Երեք դար ու կէս յետոյ», թարգմ. Սալլիւմեանի Գ. 7 կոպ.

Հասցէ Ախալքալաք—Թարգմանիչի մօտ.

Թիֆլիսի գրավաճառանոցներում և

Ալեքսանդրապոլ, Մալիսասեանի տպարանում: